

Հայաստանի Հանրապետության տարածքում 2004 թ. առաջին կիսամյակում արձանագրված արտակարգ իրավիճակները

Ամփոփվեցին առաջին կիսամյակի արդյունքները

Տեխնածին արտակարգ իրավիճակներ

2003 թ. նույն ժամանակահատվածի համեմատ 2004 թ. տեխնածին արտակարգ իրավիճակները (դեպքերը) աճել են մոտ 25 տոկոսով (2003 թ.՝ 906 դեպք): Հատկապես աճել է հրդեհների (157-ով) եւ ճանապարհատրանսպորտային պատահարների (75-ով) թիվը:

Տեխնածին արտակարգ իրավիճակների 52 տոկոսը (584 դեպք) բաժին է ընկել մայրաքաղաքին, ինչը պայմանավորված է հրդեհների (324 դեպք) եւ ճանապարհատրանսպորտային պատահարների (253 դեպք) ցուցանիշների աճով:

Հրդեհներ

Հանրապետությունում 2004 թ. առաջին կիսամյակում գրանցվել է հրդեհների 686 ահազանգ, որոնից հրդեհ է գրանցվել 579 դեպքում: 21 դեպքում գրանցվել է կեղծ ահազանգ, 17-ում՝ հսկվող կրակ, 69-ում գրանցվել է հրդեհի ծագման սպառնալիք (2003 թ. առաջին կիսամյակում գրանցվել է 568 ահազանգ, որոնից հրդեհ է գրանցվել 422 դեպքում, 71-ում գրանցվել է կեղծ ահազանգ, 66-ում՝ հրդեհի ծագման սպառնալիք, 9-ում՝ հսկվող կրակ):

Հրդեհների հետեւանքով 2004 թ. առաջին կիսամյակում զոհվել է 5, տուժել 14 մարդ (2003 թ. առաջին կիսամյակում զոհվել է 9, տուժել 13 մարդ):

Հրդեհների 23,8 տոկոսը (163 դեպք) ծագել է բնակելի շինություններում, որից 9,2 տոկոսը՝ բնակելի շենքերում, 14,6 տոկոսը՝ առանձնատներում (տնամերձ կառույցներում) (2003 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է 26 դեպքով):

Կտրուկ աճել են խոտածածկ տարածքներում հրդեհների բռնկման դեպքերը. եթե 2003 թ. դրանց բաժին էր ընկել 9,9 տոկոս (56 դեպք), ապա 2004 թ.՝ 23,9 տոկոս (164 դեպք, 85-ը՝ միայն հունիս ամսին, որոնից 76-ը՝ մայրաքաղաքում): Կտրուկ աճը պայմանավորված է մայիսին տեղացած առատ անձրեւներով եւ հունիսի չոր ու առանց տեղումների կլիմայով, որը մայրաքաղաքում ուղեկցվեց օդի բարձր ջերմաստիճանով:

Հրդեհների թվի աճ գրանցվեց բոլոր ամիսներին, բացառությամբ մայիսի, որի ընթացքում գրանցվեց ռեկորդային ցածր ցուցանիշ (47 դեպք, 2003 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ նվազելով 57 տոկոսով), ինչը պայմանավորված էր երկարատեւ եւ առատ տեղումներով ողջ հանրապետության տարածքում: Հատկապես հրդեհաշատ էր հունիսը. գրանցվեց 168 դեպք (2003 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ 1,7 անգամ ավելի):

2004 թ. առաջին կիսամյակում հանրապետության անտառներում (փետրվար ամսին Սյունիքի եւ Լոռու, մարտ ամսին՝ Տավուշի մարզերում) գրանցվել է հրդեհների բռնկման 5 դեպք:

Գրանցվել է աղբի բռնկման 86 դեպք (ընդհանուր հրդեհների թվի 12,5 տոկոսը), ընդ որում 32-ը (37 տոկոս)՝ գրանցվել է բնակելի շենքերի աղբատարներում:

Գրանցվել է պահեստավորված անասնակերի բռնկման 61 դեպք. այրվել է մոտ 180 տոննա պահեստավորված անասնակեր, որը 73-ով ավելի է 2003 թ. առաջին կիսամյակում գրանցված ցուցանիշից:

Մայրաքաղաքում գրանցվել է հրդեհների բռնկման 324 (56 տոկոս) դեպք. աճել է 36 տոկոսով (86 դեպքով):

Հրդեհների աճ է գրանցվել Սյունիքի (13 դեպքով, 2,9 անգամ), Արագածոտնի (13 դեպքով, 2,4 անգամ), Լոռու (34 դեպքով, 1,9 անգամ), Գեղարքունիքի (15 դեպքով, 1,9

անգամ), Վայոց ձորի (6 դեպքով, 7 անգամ), Տավուշի (6 դեպքով, 1,5 անգամ) եւ Արարատի (2 դեպքով, 1,1 անգամ) մարզերում: Հրդեհները նվազել են Կոտայքի (8 դեպքով, 38 տոկոսով), Արմավիրի (7 դեպքով, 32 տոկոսով) եւ Շիրակի (6 դեպքով, 13 տոկոսով) մարզերում:

Հրդեհների առաջացման 80 դեպքում մարման աշխատանքներն իրականացվել են մինչ հրշեջների ժամանումը՝ բնակիչների եւ ականատեսների ուժերով (հրդեհների ընդհանուր թվի մոտ 14 տոկոսը):

Գրանցվել է հրդեհների ինքնամարման 10 եւ էլիանգույցներում (ենթակայաններում, էլ. եւ հաշվիչ վահանակներում) վթարային ռեժիմների առաջացման (կարճ միացումների դեպքեր, որոնք չեն ուղեկցվել հրդեհներով) 80 դեպք:

Հրդեհների վերաբերյալ ահազանգերի մոտ 84 տոկոսը բաժին է ընկել հանրապետության քաղաքներին, որից 57 տոկոսը՝ (391 ահազանգ) մայրաքաղաքին:

Փլուզումներ

2004 թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել է շենքերի, շինությունների, ինժեներական կառույցների ընդհանուր եւ մասնակի փլուզման 17 դեպք (դեպքերի ընդհանուր թվի 1,6 տոկոսը). զոհվել է 2 մարդ, մեկը՝ մայրաքաղաքում: 2003 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ փլուզումների թիվը նվազել է 24 դեպքով (2,3 անգամ):

Ջգալի նվազել են (8 դեպքով, 2 անգամ) ավտոճանապարհներին եւ երկաթգծերին ինժեներական կառույցների փլուզման դեպքերը, ինչը պայմանավորված է գետերի ցածր հարաբերական ակտիվությամբ 2003 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ:

Փլուզման դեպքերի մոտ 82 տոկոսը (14 դեպք) գրանցվել է մարզերում: Ընդ որում, փլուզման դեպքեր չեն գրանցվել Վայոց ձորի, Սյունիքի մարզերում եւ 2 դեպքով նվազել են Շիրակի մարզում, երբ 2003 թ. նույն ժամանակահատվածի համեմատմամբ նշված մարզերում դրանք կազմում էին ընդհանուր փլուզումների թվի 73 տոկոսը (Վայոց ձորում՝ 15, Սյունիքում՝ 8 Շիրակում՝ 7 դեպք): Թե՛ 2003 թ., թե՛ 2004-ի առաջին կիսամյակներում փլուզումներ չեն գրանցվել Արմավիրի եւ Արագածոտնի մարզերում:

Փլուզումների գերակշռող մեծամասնությունը՝ 71 տոկոս (12 դեպք) գրանցվել է գարնան ամիսներին, ընդ որում 53 տոկոսը՝ մարտ ամսին (9 դեպք), ինչը պայմանավորված է այդ ժամանակահատվածին բնորոշ բնակլիմայական գործոնների ակտիվացմամբ (2003 թ. հաշվետու ժամանակահատվածում կազմել են 68 տոկոս, 27 դեպք):

Պայթյուններ

Գրանցվել է պայթյունի 11 դեպք. զոհվել է 6, տուժել 15 մարդ: Մեկ դեպքում պայթյունը դարձել է հրդեհի առաջացման պատճառ: 2003 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ պայթյունների թիվն աճել է 2 դեպքով, զոհերինը՝ պակասել մեկով, տուժածներինը՝ ավելացել չորսով:

Այս տարվա պայթյունների գերակշռող մեծամասնությունը՝ 73 տոկոս (8 դեպք) գրանցվել է բնակելի շինություններում:

Պայթյունի 3 դեպք գրանցվել է մայրաքաղաքում (2003 թ. հաշվետու ժամանակահատվածում՝ 5 դեպք). զոհվել է 2 մարդ (2003 թ. նույն ժամանակահատվածում՝ 4, տուժել՝ 4 մարդ): Պայթյունի 3 դեպք գրանցվել է Կոտայքի (զոհվել է 1, տուժել՝ 12 մարդ), 2-ը՝ Գեղարքունիքի (զոհվել է 1, տուժել՝ 2 մարդ), 2-ը՝ Արագածոտնի (զոհվել է 2 մարդ) եւ 1-ը՝ Շիրակի մարզերում:

Հինգ դեպքում (2003-ին՝ նույնքան) պայթյունի պատճառ է դարձել արտահոսքը գազի բալոնից (4, մեկ դեպքում՝ տրանսպորտային միջոցում տեղադրված), եւ գազատար խողովակից (1): Երեք դեպքում (2003 թ.՝ նույնքան)՝ պայթյունի են հանգեցրել անհայտ պայթուցիկ նյութի եւ զինամթերքի (նռնակի, ականի) կիրառումը, մեկական՝ եռակցման

աշխատանքները, պայթուցիկ եւ հրդեհավտանգ նյութերի տեղափոխման եւ ջերմագեներատորային սարքերի շահագործման անվտանգության կանոնների խախտումը:

Ճանապարհատրանսպորտային պատահարներ

2004 թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել է ճանապարհատրանսպորտային պատահարի 515 դեպք, որոնց հետեւանքով զոհվել է 97, տուժել 674 մարդ:

2003 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ ճանապարհատրանսպորտային պատահարների թիվն աճել է 144-ով, գրանցվել է նաեւ զոհերի (6-ով) եւ տուժածների (204-ով) թվի աճ:

Տարերային արտակարգ իրավիճակներ

Գրանցվել է 139 տարերային արտակարգ իրավիճակ (դեպք), ինչի հետեւանքով զոհվել է 3, տուժել 3 մարդ: 2003 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ դեպքերն աճել են 19-ով (16 տոկոսով): Ընդ որում, զգալի նվազել են սելավների (21-ով, 3,3 անգամ), քարաթափումների (11-ով, 5,5 անգամ) եւ սողանքների (14-ով, 7,5 անգամ) դեպքերը, աճել կարկտահարման (12-ով, 2,3 անգամ) եւ ջրհեղեղների (6-ով, 1,3 անգամ) դեպքերը:

Ջրհեղեղներ, սելավներ

Գրանցվել է ջրհեղեղների առաջացման 25, սելավների՝ 9 դեպք:

Մարտ ամսի առաջին շաբաթուն ջերմաստիճանի կտրուկ աճը, լեռներում տաք քամիները, հորդառատ անձրեւները նպաստեցին արագ ձնհալին, ինչի հետեւանքով հանրապետության որոշ գետեր վարարեցին, առաջացան սելավային հոսքեր եւ ջրհեղեղներ, որոնք հասցրեցին զգալի վնաս Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Շիրակի, Արմավիրի մարզերի մի շարք բնակավայրերի: Ախուրյանի ջրամբարից ջրի առատ բացթողումների հետեւանքով վարարեց Արարատի մարզով անցնող Արաքս գետը, որը ջրածածկեց մի շարք ափամերձ գյուղեր:

Մարտ ամսվա առաջին շաբաթուն մայրաքաղաքում վարարեց Հրազդան գետը՝ ողողելով Հրազդանի կիրճում գտնվող մի շարք ափամերձ շինություններ, վնասեց գետը հատող ջրամատակարարման եւ կոյուղու համակարգերը, իսկ Դոդոխյան, Իսակով, Չարբախի թիվ 5, 6, 7 փողոցներում ափերից դուրս եկած գետը լցվեց հարակից սեփական տները:

Գետում ջրի ելքի բարձրացումը (Հրազդան գետի «Երեւան» դիտակետում գրանցված տվյալներ) պայմանավորված էր Կոտայքի մարզում մարտի 1-ից 5-ը օդի ջերմաստիճանի կտրուկ աճով՝ 3,5 0C մինչեւ 19 0C, որը նպաստեց արագ ձնհալին, ինչն ամսվա 2-րդ շաբաթին գետում ջրի ելքը հասցրեց տարվա առավելագույն ցուցանիշի՝ 84 մ3/վրկ (գետի վտանգավոր ելքը «Երեւան» դիտակետի հատվածում 88 մ3/վրկ):

Նմանատիպ իրավիճակ գրանցվեց մայիս եւ հունիս ամիսներին: Եթե մարտին ջրհեղեղների եւ սելավների առաջացումը հիմնականում պայմանավորված էր ձնհալով եւ գետերի վարարումներով, ապա մայիսին եւ հունիսին՝ առատ եւ տեւական տեղումներով՝ խոշոր կարկուտի եւ տեղատարափ անձրեւի տեսքով:

Մայիսի 17-19-ը ջրհեղեղի 5 դեպք գրանցվեց Լոռու, 28-ին՝ 1 դեպք Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղում, 30-ին՝ սելավային հոսք առաջացավ Շիրակի մարզի Սարակապ գյուղում: Հունիս ամսին ջրհեղեղ գրանցվեց Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Տավուշի մարզերում, սելավային հոսքերի առաջացման մեկական դեպք՝ Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի մարզերում:

Երկրաշարժեր

Գրանցվել է 51 երկրաշարժ, որոնցից 47-ը՝ հանրապետության եւ նրա սահմանամերձ տարածքներում (2003 թ. հաշվետու ժամանակահատվածում՝ 13):

Հիմնականում դիտվել են 1-3 բալ ուժգնությամբ երկրաշարժեր, որոնց էպիկենտրոնները մեծամասնությամբ տեղաբաշխված են եղել հանրապետության հյուսիս-արեւմտյան եւ հյուսիսային սահմանամերձ տարածքներում:

Երկրաշարժերի հետեւանքով հանրապետության տարածքում ավերածություններ, զոհեր եւ վիրավորներ չեն գրանցվել:

Քարաթափումներ

Գրանցվել է քարաթափման 2 դեպք: Փետրվարի 16-ին մայրաքաղաքի Մյասնիկյան պողոտայում գրանցվեց միջին չափսի ժայռաբեկորների գահավիժում, ինչի հետեւանքով փակվել էր երթուղիները: Հետագա քարաթափումներից խուսափելու նպատակով, մայրաքաղաքում՝ առավել վտանգավոր հատվածներում փրկարարների կողմից անցկացվել են քարաթափման աշխատանքներ: Հունիսի 16-ին Վայոց ձորի մարզի Շատին գյուղում գահավիժած ժայռաբեկորները վնասել են մեկ սեփական տուն:

Փլվածքներ

Գրանցվել է հողաշերտի, լեռնային ապարների փլվածքների 4 դեպք. զոհվել է 2 մարդ:

Ապրիլի 1-ին Երեւանի Նոր Նորք համայնքում գտնվող գաջի գործարանի հանքում լեռնային ապարների փլվածքից զոհվել է մեկ մարդ: Ապրիլի 15-ին Երեւանի Պուշկինի փողոցի թիվ 2 շենքի հարեւանությամբ փլուզվել է հողաշերտը, ինչի հետեւանքով վնասվել են ջրատար եւ գազատար խողովակները: Հունիսի 6-ին Տավուշի մարզկենտրոն Իջեւան քաղաքի թիվ 4 թաղամասի հարեւանությամբ գտնվող հանքախորշում լեռնային ապարների փլվածքից զոհվել է մեկ մարդ: Փլվածքի մեկ դեպք է գրանցվել Կոտայքի մարզում՝ Արզնի բնակավայրի հարեւանությամբ:

Սողանքներ

Գրանցվել է սողանքների ակտիվացման 2 դեպք: Մարտի 6-ին Կոտայքի մարզկենտրոն Հրազդան քաղաքի Կաքավաձոր թաղամասում սահել է հեղեղումներից գերխոնավացած հողաշերտը: Հունիսի 14-ին Լոռու մարզկենտրոն Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղամասի 6-րդ փողոցում սահել է հողաշերտը, ինչի հետեւանքով վնասվել է հարակից տարածքով անցնող ջրատար խողովակը:

Ուժեղ քամիներ

Գրանցվել է ուժեղ քամիների, փոթորիկների, պտտահողմների 14 դեպք, որոնցից 12-ը՝ փետրվար-մարտ ամիսներին (համապատասխանաբար 5 եւ 7 դեպք):

Փետրվարի 2-րդ եւ 3-րդ տասնօրյակներում, մարտի 5-7-ը ուժեղ քամիներ գրանցվեցին Շիրակի, Վայոց ձորի, Սյունիքի, Արագածոտնի, Տավուշի մարզերում, ինչի հետեւանքով մեծ վնաս հասցվեց տնտեսությանը՝ վնասվեցին եւ քշվեցին շինությունների տանիքներ, հեռահաղորդակցման եւ էներգամատակարարման գծեր:

Փետրվարի 11-ին քամուց տուժեցին Տավուշի մարզի Գոշ, իսկ 14-ին՝ Կոտայքի մարզի Բջնի համայնքները: Փետրվարի 23-ին ուժեղ քամի գրանցվեց Արագածոտնի մարզում, ինչի

հետեւանքով քշվեցին տանիքներ, շրջվեցին էլսյուններ՝ մասամբ հոսանքազրկելով Ապարան եւ Թալին քաղաքները, ամբողջությամբ՝ հարակից 42 գյուղական համայնք:

Մարտի 6-ին Շիրակի մարզում՝ Առիճ, Մեծ Մանթաշ, Սարալանջ գյուղերում վայրագ քանուն հաջորդեց երկարատեւ եւ տեղատարափ անձրեւը, որը լցվեց մի շարք տներ, զգալի տուժեց Սարալիկ քաղաքը: Նույն օրը քամին վնասներ հասցրեց Վայոց ձորի մարզում ավերելով եւ քշելով Աղավնաձոր, Յերմոն, Գոմք, Աղնջաձոր, Սերս, Ջեղեա, Արտավան, Ազատեկ, Սարավան, Խնձորուտ, Արին գյուղական համայնքներում եւ Եղեգնաձոր քաղաքում բազմաթիվ շինությունների տանիքներ, շրջեց էլիեմասյուններ, եղան հոսանքազրկումներ, իսկ Սյունիքի մարզում՝ Կապան, Մեղրի, Ագարակ քաղաքներում եւ Արծվանիկ ու Շրվենանց գյուղերում ջարդվեցին բազմաթիվ բնակելի շինությունների ապակիներ:

Տեղումներ

Հանրապետության տարածքում ձյան, ձնախառն անձրեւի, անձրեւի եւ կարկուտի տեսքով տեղացել են 9606 մմ տեղումներ (2003 թ. նույն ժամանակահատվածում գրանցվել է 9064 մմ): Եթե 2003 թ. առաջին կիսամյակում տեղումների քանակով աչքի ընկավ մարտը, ապա 2004 թ.՝ անձրեւ եւ կարկուտ տեղաց ապրիլ, մայիս եւ հունիս ամիսներին:

Ձնաբուք

Գրանցվել է ձնաբքի, ձնահողմի 5 դեպք: Մասնավորապես աչքի ընկավ հունվար ամիսը, երբ առաջին շաբաթում՝ Գեղարքունիքի, իսկ վերջինում՝ Շիրակի մարզերում գրանցվեցին ձնաբքի դեպքեր, ինչի հետեւանքով մասնակի կամ ամբողջությամբ անանցանելի դարձան միջպետական եւ միջհամայնքային ավտոճանապարհներ, երթեւեկության ժամանակ արգելափակվեցին տրանսպորտային միջոցներ: Արտակարգ իրավիճակների վարչության, պետավտոտեսչության եւ ճանապարհների սպասարկման ստորաբաժանումների համատեղ եւ օպերատիվ աշխատանքի շնորհիվ, արգելափակված տրանսպորտային միջոցները հնարավորին սեղմ ժամկետներում դուրս են բերվել անվտանգ տարածքներ:

Հորդառատ անձրեւ

Գրանցվել է հորդառատ անձրեւի 7 դեպք: Մարտի առաջին շաբաթում հորդառատ անձրեւներից, հաճախ ձնախառն, ջրհեղեղներ առաջացան Գեղարքունիքի մարզի Ծաղկաշեն եւ Վերին Գետաշեն, Արագածոտնի մարզի Սանգյառ գյուղերում: Անձրեւ տեղաց գրեթե ամբողջ հունիս ամսին՝ ջրհեղեղներ առաջացնելով Շիրակի (հունիսի 7-ին՝ Գյումրի քաղաքում, Շիրակ գյուղում), Գեղարքունիքի (հունիսի 20-ին՝ Գանձակ գյուղում), Արագածոտնի (հունիսի 28-ին՝ Դերեկ գյուղում ավերվել են ցանքատարածքներ) եւ Լոռու (հունիսի 28-ին՝ Հոբարձի գյուղում) մարզերում:

Կարկուտ

Գրանցվել է կարկուտի 21 դեպք, ընդ որում, 2003 թ. համեմատությամբ, կարկտահարման դեպքերն աճել են (12 դեպքով) ոչ միայն թվաքանակով, այլեւ՝ կարկուտի տրամաչափով, տեւողությամբ եւ ընդգրկող տարածքների մակերեսով:

Կարկտահարման հետեւանքով մեծ վնաս է հասցվել Գեղարքունիքի, Տավուշի, Վայոց ձորի, Շիրակի, Լոռու, Արագածոտնի մարզերին. շարքից դուրս են եկել գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածքներ, պտղատու այգիներ, բանջարաբոստանային կուլտուրաներ, շինանյութ, քանդվել միջհամայնքային նշանակության ավտոճանապարհներ, ջարդվել տների տանիքներ, վնասվել տրանսպորտային միջոցներ, տեւական կարկուտից

բազմաթիվ բնակավայրերում առաջացել են ջրհեղեղներ, քշվել են ափամերձ ինժեներական կառույցներ:

Կարկտահարությունն առավել խոշոր վնաս է պատճառել Լոռու՝ մոտ 697 000 հազ. դրամի (2466,5 հա), Տավուշի՝ մոտ 309 206 հազ. դրամի, Վայոց ձորի՝ մոտ 20 067 հազ. դրամի (205 հա), Գեղարքունիքի՝ մոտ 48 201 հազ. դրամի (191 հա) մարզերին:

Կայծակնահարում

Գրանցվել է կայծակնահարման 2 դեպք. Վայոց ձորի մարզի Գլաձոր գյուղում տուժել է 2 մարդ, 1 մարդ՝ մայրաքաղաքում:

Ցրտահարություն

Վաղ վեգետացիոն շրջանում գրանցվել է ցրտահարության մեկ դեպք: Ապրիլ ամսվա առաջին շաբաթում նկատվեց օդի ջերմաստիճանի կտրուկ իջեցում ողջ Հանրապետության տարածքում, որն իր առավելագույն ցուցանիշներին հասավ ապրիլի 4-ից 5-ը, երբ գրանցվեց օդի ջերմաստիճանի կտրուկ իջեցում Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի մարզերում՝ - 8 - 12 0C, Լոռու եւ Շիրակի մարզերում՝ -11 - 15 0C, ինչի հետեւանքով ցրտահարվել են գյուղատնտեսական մշակաբույսեր, պտղատու ծառեր, բանջարաբոստանային կուլտուրաներ:

Բացասական ջերմաստիճանը գիշերվա ժամերին Շիրակի մարզում պահպանվեց մինչեւ ապրիլի 10-ը, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի մարզերում՝ մինչեւ ապրիլի 8-ը: Ապրիլի 10-ին եւ 16-ին ջերմաստիճանի կտրուկ անկման դեպքեր գրանցվեցին Գեղարքունիքի մարզում, որտեղ գիշերվա ժամերին համապատասխանաբար գրանցվեց անկում մինչեւ - 8,2 եւ - 10 0C:

Սոցիալ-կենցաղային արտակարգ իրավիճակներ

Գրանցվել է 451 սոցիալ-կենցաղային արտակարգ իրավիճակ (դեպք). զոհվել է 10, տուժել՝ 494 մարդ: 2003 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ դեպքերն աճել են 27-ով: Չոհերի թիվն աճել է 1-ով, տուժածներինը՝ նվազել 154-ով:

Դեպքերի զերակշռող մեծամասնությունը՝ 89,4 տոկոս, բաժին է ընկել թունավորումներին (արտակարգ իրավիճակների ընդհանուր թվի 23,5 տոկոսը), որի ցուցանիշները 2003 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել են 55 դեպքով (մոտ 16 տոկոսով): Աճել են նաեւ զենք-զինամթերքի հայտնաբերման (6-ով, 4 անգամ), ռումբի տեղադրման մասին ահազանգերի (5-ով, 2,3 անգամ) եւ դիակի հայտնաբերման (5-ով, 1,6 անգամ) դեպքերը: Զգալի նվազել են (46-ով, 4,3 անգամ) համաճարակների, մարդկանց եւ կենդանիների զանգվածային վարակման դեպքերը:

Թունավորումներ

Գրանցվել է թունավորման 403 դեպք, ինչի հետեւանքով զոհվել է 3, տուժել 458 մարդ:

2003 թ. առաջին եռամսյակի համեմատությամբ հանրապետությունում զգալի աճել են թունավորման դեպքերը սննդամթերքից (11-ով, 1,5 անգամ) եւ քիմիական նյութերից (20-ով, 1,7 անգամ), նվազել են՝ ալկոհոլային խմիչքներից (13-ով, 1,2 անգամ) եւ շնոլ գազից (12-ով, 2,3 անգամ) թունավորման դեպքերը:

Թունավորումների 56,6 տոկոսի (228 դեպք) պատճառ են դարձել անորակ ալկոհոլային խմիչքները (32 տոկոս, 129 դեպք) եւ ժամկետանց կամ կեղծ դեղորայքի օգտագործումը (24,6 տոկոս, 99 դեպք): Գրանցվել է շնոլ գազից թունավորման 30 դեպք, որոնցից 2-ում գրանցվել

են զոհեր. 2 մարդ զոհվել է Շիրակի մարզկենտրոն Գյումրիում՝ վառարանից շնու գազի արտահոսքից, 1 մարդ՝ Գեղարքունիքի մարզում՝ Սոթք գյուղի հարելանությամբ գտնվող ոսկու հանքերում՝ գեներատորից գազի արտանետումներից (2003 թ. շնու գազից թունավորվել եւ զոհվել է 6 մարդ):

Համաճարակներ, մարդկանց եւ կենդանիների սուր-վարակիչ հիվանդություններ

Գրանցվել է համաճարակների բռնկման, զանգվածային սուր-վարակիչ հիվանդություններով մարդկանց եւ կենդանիների վարակման 14 դեպք:

Փետրվարի 4-ին Գյումրիի Նորավան թաղամասում գրանցվել է խմելու ջրի աղտոտում, ինչի հետեւանքով բռնկվել է աղիքային ինֆեկցիա, որից տուժել է 40 մարդ: Ջրի աղտոտման պատճառ է եղել խողովակների ապօրինի փոխարինումը, ինչի հետեւանքով ձնհալի ջրերը թափանցել են համակարգ:

Ապրիլի 17-ին սիբիրախտի բռնկման դեպք է գրանցվել Այգաբաց գյուղում, ինչի հետեւանքով 2 շաբաթվա ընթացքում անկել է 57 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, հոսպիտալացվել 3 մարդ, մեկի մոտ հայտնաբերվել է ախտորոշումը: Համաճարակի բռնկման պատճառ են դարձել անորակ պատվաստանյութերը:

Համաճարակի բռնկման դեպք է գրանցվել Կոտայքի մարզի Ֆանտան գյուղում. 2003 թ. գյուղում մարդկանց տուլարեմիայով զանգվածային վարակման դեպքից տուժածներից 7-ի մոտ գրանցվել է վարակի ռեցեդիվ (հիվանդությունը կրկնվել է):

2004 թ. առաջին կիսամյակում Կոտայքի, Սյունիքի, Գեղարքունիքի մարզերում գրանցվել են տուլարեմիայով վարակման առանձին դեպքեր, որի փոխանցման պատճառ են դարձել միջատների խայթոցները:

Մայիսի 25-ին Արարատի մարզի Այնթափ գյուղում գրանցվել է սիբիրախտի 1 դեպք, ինչի հետեւանքով անկել է մեկ խոշոր եղջերավոր անասուն:

Ջրահեղձում

Հանրապետության ջրային ավազաններում գրանցվել է ջրահեղձման 6 դեպք. զոհվել է 7 մարդ, որոնցից 4-ը՝ գետերում, 2-ը՝ ջրանցքում, 1-ը՝ լճում: (2003 թ. նույն ժամանակահատվածում՝ 3 դեպք):

Ջրահեղձման դեպքերից 2-ը գրանցվել են մայրաքաղաքում (մայիսի 15-ին եւ 18-ին)՝ Հրազդան ջրանցքի ստորին մասում (ջրահեղձվել է 2 մարդ) եւ Հրազդան գետում, մեկական դեպք Գեղարքունիքի (Մարտունի գետում), Լոռու (Տավուշ գետում), Արմավիրի (Այդր լճում) եւ Արագածոտնի (Ամբերդ գետում) մարզերում:

Ձենք-զինամթերքի հայտնաբերում

Գրանցվել է զենք-զինամթերքի հայտնաբերման 8 դեպք, որոնցից 3-ը՝ մայրաքաղաքում, 3-ը՝ Շիրակի մարզում, մեկական դեպք՝ Արագածոտնի եւ Սյունիքի մարզերում: Ձինամթերքի հայտնաբերման, վնասազերծման եւ տեղափոխման ժամանակ զոհեր եւ տուժածներ չեն գրանցվել:

Դիակի հայտնաբերում

Գրանցվել է դիակի հայտնաբերման 13 դեպք, որոնցից 7-ը՝ մայրաքաղաքում, 2-ական՝ Կոտայքի եւ Լոռու, մեկական՝ Արարատի եւ Սյունիքի մարզերում: